ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ 1994 ՄԱՅԻՍԵԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ 2016 ԱՊՐԻԼԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Բ. ՄԱՍ)

ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ
nazaryan_h90.90@mail.ru

Ս-300ՊՍ ՋՀՀ, զինուորական շքերթ, Երեւան, 2016 Սեպտեմբեր 21

ՄՈՒՏՔ

2022ին լրացաւ հայկական զինուած ուժերի հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորման 30ամեակը: Այդ առիթով նախորդ տարի սկսեցինք եւ այս տարի շարունակում ենք ուսումնասիրել հայկական ՀՕՊ զօրքերի պատմութիւնը: Ուսումնասիրութեան առաջին յօդուածում[1] ներկայացրել ենք հայկական ՀՕՊ զօրքերի կազմաւորման գործընթացը եւ մասնակցութիւնը արցախեան առաջին պատերազմին, իսկ այս երկրորդ յօդուածում կը ներկայացնենք հայկական ՀՕՊ զօրքերի զարգացումը, սպառազինութեան ու մեքենասարքերի (*տեխնիկա*) յետագայ համալրման ու արդիականացման գործընթացը 1994 մայիսեան զինադադա-

[1] Ուսումնասիրութեան առաջին մասը տե՛ս՝ Հայկ Նազարեան, «Հայկական հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորումը Արցախեան Ա. պատերազմի տարիներին», *Հայակազեան հայագիտական հանդէս*, 42/2:2022, էջ 57-72:

րից յետոյ, ՀՕՊ զօրքերի մասնակցութիւնը 2016 ապրիլեան քառօրեայ ռազմական գործողութիւններին:

Յօդուածում զուգահեռներ ենք տարել նաեւ տարածաշրջանի միւս երկու պետութիւնների՝ Ադրբեջանի եւ Վրաստանի հանրապետութիւնների ՀՕՊ զօրքերի կառուցուածքի եւ սպառազինութեան միջեւ:

Ինչպէս յօդուածաշարի առաջին, այնպէս էլ սոյն յօդուածը գրուած է բացառապէս հաւաստի, բաց եւ հասանելի սկզբնաղբիւրների, ինչպէս նաեւ պատմագիտական ու ռազմագիտական գրականութեան հիման վրայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՕՊ ԶՕՐՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
1994Ի ՄԱՅԻՍԵԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՅԵՏՈՅ

Արցախեան առաջին պատերազմի արդիւնքում 1994 Մայիսին մի կողմից Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ միւս կողմից Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ ստորագրուեց հայոց համար յաղթական զինադադար: Փաստաթուղթը հեռապատճէնի (ֆաքս) տարբերակով ստորագրեցին, համապատասխանաբար, ԱՀ պաշտպանութեան նախարար Մամեդրաֆի Մամեդովը Պաքւում, 1994 Մայիսի 9ին, ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը՝ Երեւանում, Մայիսի 10ին, ԼՂՀ պաշտպանութեան բանակի հրամանատար Սամուէլ Բաբայեանը՝ Ստեփանակերտում, Մայիսի 11ին: Այն ուժի մէջ մտաւ Մայիսի 12ին[2]:

1995 Մայիսի 9ին Ստեփանակերտում կայացաւ յաղթական զօրահանդէս, որի ժամանակ հրապարակով անցան նաեւ ԼՂՀ ՊԲ ՀՕՊ գնդի (հրամանատար հազարապետ Նիկոլայ Բաբայեան) սպառազինութեան մէջ ընդգրկուած Օսա-ԱԿ (Оса-АК, մինչեւ 10կմ հեռահարութեան), Ս-125 Նեւա (С-125 Нева, մինչեւ 30կմ հեռահարութեան) եւ 2Կ-11 Կրուգ (2К-11 Круг, մինչեւ 50կմ հեռահարութեան) զենիթահրթիռային համակարգերը[3]:

1990ականների կէսերից սկսուեց ՀՀ ՀՕՊ կենտրոնացուած համակարգի ստեղծման գործընթացը: 1995 Փետրուարի 10ին Ալմա-Աթայում ՀՀն Պելառուսի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաճիկստանի, Ուզպեկստանի եւ Ուքրայնայի հետ միասին

---

[2] Զինադադարի փաստաթղթի ամբողջական հրատարակուած տարբերակը տե՛ս՝ Հենրիկ Խաչատրեան, Գարեգին Ղազարեան, Սիրվարդ Մարգարեան, *Յաղթանակներն՝ ինչպէս եղել են. ազդականչ 44*, Հայկական հանրագիտարան. հրատ., Երեւան, 2008, էջ 174:

[3] Զօրահանդէսի արխիւային տեսաժապաւէնը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=0y4IqgMawos&t=1644s: 10.06.2019:

ստորագրեց Անկախ պետութիւնների համագործակցութեան (ԱՊՀ) անդամ-պետութիւնների միացեալ ՀՕՊ համակարգի ստեղծման մասին պայմանագիրը[4]: Միաժամանակ ՀՀ տարածքում գտնուող «Ռուսաստանի դաշնութեան զինուած ուժերի կարգավիճակի մասին» 1992 Օգոստոսի 21ին ՀՀ նախագահ Լեւոն Տէրպետրոսեանի եւ ՌԴ նախագահ Պորիս Եելցինի միջեւ ստորագրուած պայմանագրով եւ 1995 Մարտի 16ի «Ռուսական ռազմական բազայի մասին» երկկողմ պայմանագրով՝ Գիւմրիում տեղակայուած նախկին խորհրդային 7րդ համազօրային բանակի 127րդ մոտոհրաձգային զօրաբաժնի հիման վրայ ձեւաւորուեց ռուսական 102րդ ռազմախարիսխը՝ իրականացնելով նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանների (Թուրքիայի եւ Իրանի հետ ՀՀ պետական սահմանների – Հ.Ն.) անվտանգութիւնը[5]: Պայմանագիրը սկզբնապէս կնքուեց 25 տարի ժամկէտով, իսկ 2010 Օգոստոսի 19-20ը ՌԴ նախագահ Տմիթրի Մեդվեդեւի ՀՀ կատարած պետական այցի շրջանակներում, Օգոստոսի 20ին ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը եւ ՌԴ պաշտպանութեան նախարար Անաթոլի Սերտիւկովը ստորագրցին N 5 արձանագրութիւնը, որով ռազմախարսխի մասին պայմանագիրը երկարաձգուեց մինչեւ 2044: N 5 արձանագրութեան մէջ «ԽՍՀՄ արտաքին սահմաններ» ձեւակերպումը՝ փոխարինուեց «ՀՀ պետական սահմաններ» ձեւով, ինչպէս նաեւ նոյն արձանագրութեամբ ռուսական կողմը՝ հայկական կողմին արդիական զինատեսակներ մատակարարելու պարտաւորութիւն ստանձնեց[6]:

Ռազմախարսխի կազմում ստեղծուեցին նաեւ օդային եւ ՀՕՊ բաղադրիչները: Մասնաւորապէս, 1995 Յուլիսի 12ին Երեւան «Էրեբունի» օդակայանում տեղակայուեցին ՌԴ ռազմօդային ուժերի 6 հատ ՄիԳ-23 (МиГ-23) կործանիչներ, որոնք 1998ին փոխարինուեցին համեմատաբար նոր 18 հատ ՄիԳ-29 (МиГ-29) կործանիչներով, իսկ արդէն 2001 Յուլիսին «Էրեբունի» օդակայանում կազմաւորուեց ռուսական 3624րդ օդային ռազմա-

---

[4] С. А. Денисенцев; А. В. Лавров; Ю. Ю. Лямин; К. В. Макиенко; А. В. Никольский, *Союзники* (Դաշնակիցներ), խմբ.՝ Կ. Վ. Մակիենկո, Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2020, էջ 23:

[5] "Министр обороны Республики Армения Сейран Оганян: Россия – исторически наш стратегический союзник. Газета «*Красная звезда*» (ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան. Ռուսաստան - պատմականօրէն մեր ռազմավարական դաշնակիցը), *Կարմիր աստղ*, Մոսկուա, 20 Մարտի 2009 (http://old.redstar.ru/2009/03/20_03/3_04.html):

[6] Պարզաբանում. Հայաստանում ՌԴ ռազմակայան, «Մեդիամաքս» լրատուական գործակալութիւնը (https://mediamax.am/am/news/parzabanum/13078), 4.02.2015:

խարիսխը[7]: ՄիԳ-29 կործանիչները սկսեցին իրականացնել մարտական հերթապահութիւն մայրաքաղաք Երեւանի երկնքում:

Բուկ-Մ1-2 ԶՀՀ, զինուորական շքերթ, Երեւան, 2016 Սեպտեմբեր 21

1998ին 102րդ ռուսական ռազմախարսխի ՀՕՊ զօրքերը համալրուեցին մեծ հեռահարութեան (մինչեւ 100կմ) Ս-300Վ (C-300B) ԶՀՀերով[8]: Այս համակարգերը, որոնք թրթուռաւոր ամրաշրջանակի վրայ տեղադրուած արձակման կայանքներ են, տեղակայուեցին Գիւմրիի մօտ՝ իրականացնելով 102րդ ռազմախարսխի հակօդային եւ հակահրթիռային պաշտպանու-

[7] Давид Петросян, “Об авиационной компоненте 102-й российской военной базы в Армении” (102րդ ռուսական ռազմախարսխի օդային բաղադրիչի մասին), интернет – журнал *Военно – политическая аналитика (Ռազմաքաղաքական վերլուծութիւն” համացանցային հանդէս)*, մատչում՝ 21.03.2016, (https://vpoanalytics.com/2016/03/21/ob-aviacionnoj-komponente-102-j-rossijskoj-voennoj-bazy-v-armenii/?fbclid=IwAR3b6j6pMNmGkKwn0I4uK43hMoI_Rtu3XpVQR7x5py2IYmQ3bSiQvO3FYIA) մատչում՝ 21.03.2016:

[8] Նոյն:

թիւնը[9]: Արդէն 2010ականների կէսերի դրութեամբ ռազմախարսխի ՀՕՊ 988րդ զենիթահրթիռային գունդը իր կազմում ունէր 1 զօրաբաժին Ս-300Վ, 1 զօրաբաժին Բուկ-Մ1-2 (Бук-М1-2), ինչպէս նաեւ 6 հատ 9Կ35 Ստրելա-10 (9К35 Стрела-10) ԶՀՀեր[10]:

ՀՀ հակօդային պաշտպանութեան գործառոյթը տրուած էր հայկական ԶՈՒերի 96րդ զենիթահրթիռային ջոկատին (սպայակոյտը տեղակայուած՝ Երեւանում)[11]: Սկսած 1995ից ռուսական կողմը ապահովում էր հայկական ՀՕՊ զօրքերի կադրերի պատրաստումը եւ ՀՕՊ միջոցների պահեստամասերի մատակարարումը, իսկ 1990ականների վերջին ՀՀն ՌԴից ստացաւ լրացուցիչ 2Կ-11Մ1 Կրուգ (2К-11М1 Круг-М1) զենիթահրթիռային կայանքներ, որոնք տեղակայուեցին ՀՀ արեւելեան եւ հարաւ-արեւելեան սահմանների մօտ ու մարտական հերթապահութիւն իրականացրեցին մինչեւ 2013: Այդ նոյն ժամանակահատուածում ՀՀ արեւմտեան սահմանների մօտ օդային տարածքի պաշտպանութիւնն իրականացնում էին փոքր հեռահարութեան Ս-125 զենիթահրթիռային համալիրները, իսկ մայրաքաղաք Երեւանի շրջակայքում՝ միջին հեռահարութեան (մինչեւ 45կմ) Ս-75Մ3 (С-75М3) զենիթահրթիռային համալիրները, ինչպէս նաեւ ՀՀ տարբեր հատուածներում տեղակայուած էին Պ-14 (П-14), Պ-18 (П-18), Պ-35 (П-35), Պ-37 (П-37), եւ Պ-40 (П-40) ռադիոտեղորոշիչ կայանքներ: Սակայն 2000ականների սկզբներից սկսած մարտական հերթապահութիւնից հանուեցին Ս-75 համալիրները (վերջին միաւորը՝ 2010ին)[12]:

ՀՀ եւ ՌԴ կառավարութիւնների միջեւ 2003 Յունուարի 17ին ստորագրուեց ռազմարհեստագիտական գործակցութեան մասին պայմանագիր, որը եկաւ լրացնելու դեռեւս 1992 Մայիսի 15ին Ուզբեկստանի մայրաքաղաք Թաշքենդում ստորագրուած (խմբագրուեց՝ 2010ին) հաւաքական ան-

---

[9] Сергей Линник, “Современное состояние системы ПВО Армении” (Հայաստանի ՀՕՊ համակարգի ներկայ վիճակը)՝ https://topwar.ru/136057-sovremennoe-sostoyanie-sistemy-pvo-armenii.html , մատչում՝ 16.02.2018:

[10] Александр Храмчихин, “Форпост с вопросами в случае конфликта России с Турцией Армения оказывается на передовой” (Ֆորպոստը հարցերով. Թուրքիայի հետ Ռուսաստանի հակամարտութեան դէպքում Հայաստանը յայտնւում է առաջնագծում), *Военно-промишленный курьер* (ВПК) (*Ռազմարդիւնաբերական սուրհանդակ* շաբաթաթերթ), № 9 (624), 9 Մարտի 2016, https://vpk-news.ru/articles/29587:

[11] *В ожидании Бури: Южный Кавказ* (Փոթորիկին սպասելիս. Հարաւային Կովկաս), խմբ.՝ Կ. Վ. Մակիենկո, Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2018, էջ 68:

[12] Линник:

վտանգութեան մասին պայմանագրին, որով սպառազինութեան եւ մեքենասարքի մատակարարումների մասով սահմանւում էին արտօնեալ պայմաններ, Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) անդամ պետութիւնների համար[13]: Այս ոլորտում երկու պետութիւնների միջեւ յետագայ զարգացման քայլերը յստակեցուեցին 2004 Սեպտեմբերին կայացած ռազմարհեստագիտական համագործակցութեան հարցերով ՀՀ եւ ՌԴ միջկառավարական յանձնաժողովի նիստում[14]:

2000ականների կէսերից, մարտական հերթապահութիւնից հանուած Ս-75 համալիրների փոխարէն, հայկական ՀՕՊ զօրքերը սկսեցին համալրուել մեծ հեռահարութեան (75կմ) Ս-300ՊՏ (Ս-300ՊՄ) եւ Ս-300ՊՍ (Ս-300ՊՄ) ԶՀՀերով: Մասնաւորապէս, 2007-8ին ՀՀն ՌԴ ԶՈՒ-կազմից ստացաւ առաջին Ս-300ՊՏ ԶՀՀերը[15], իսկ 2010ին՝ 4 հատ Ս-300ՊՍ ԶՀՀեր (արժէքը 30 մլն տոլար):[16] Ժամանակի ընթացքում դրանց թիւն աստիճանաբար աւելացաւ եւ ստացուած Ս-300ՊՏ ԶՀՀերը (4 զօրաբաժին), տեղակայուեցին Երեւանի շուրջ, իսկ Ս-300ՊՍ ԶՀՀերը (2 զօրաբաժին)՝ ՀՀ հարաւ-արեւելեան սահմաններին (Սիւնիքի մարզի տարածքում), լեռնային գօտիներում, ինչպէս նաեւ ԼՂՀ տարածքում[17]: Յատկանշական է այն, որ հայկական ՀՕՊ զօրքերը համալրած Ս-300ՊՍ ԶՀՀերը յարմարեցուեցին յատուկ լեռնային պայմաններին[18]: Ս-300ՊՍ համակարգերը առաջին անգամ հանրութեանը ներկայացուեցին ՀՀ անկախութեան 20ամեակի առթիւ 2011 Սեպտեմբերի 21ին Երեւանի Հանրապետութեան հրապարակում կայացած զօրահանդէսի ժամանակ[19]:

---

[13] Михаил Александров, “Военно - техническое сотрудничество России и Армении набирает обороты” (Ռուսաստանի եւ Հայաստանի ռազմարհեստագիտական գործակցութիւնը թափ է հաւաքում), *Ноев Ковчег* газета (Նոյեան տապան թերթ), № 2 (232), 1-15 Փետրուարի 2014 (https://noev-kovcheg.ru/mag/2014-02/4297.html):

[14] *Структура закупок вооружений и военной техники Армении. Аналитическая записка* (Հայաստանի սպառազինութեան եւ ռազմական մեքենասարքի գնումների կառուցուածքը. վերլուծական տեղեկագիր), «ЦАМТО» (Զէնքի միջազգային առեւտրի վերլուծութեան կենտրոն), Մոսկուա, 2022, 2 (https://armstrade.org/files/analytics/398.pdf):

[15] *Союзники,* էջ 18, Դաշնակիցներ, էջ 18:

[16] *Структура*, էջ 3:

[17] Линник:

[18] Սէյրան Օհանեան, *Հայկական բանակի 20-ամեայ փարեգրութիւն (համառօտ ուրուագիծ)*, ՀՀ ՊՆ, Երեւան, 2012, էջ 201:

[19] Զօրահանդեսի արխիւային տեսաժապաւէնը՝

Ս-300ՊՏ ՀՀՀերը խորհրդային բանակի սպառազինութեան մէջ էին ընդգրկուել 1978ին. դրանք անուանուր քարշակուող արձակման կայանքներ են եւ կարող էին արձակել տարբեր հեռահարութեան զենիթային կառավարուող հրթիռներ, այդ թւում՝ 5Վ55Կ (5B55K)՝ 47կմ հեռահարութեան, 5Վ55Ռ (5B55P)՝ 75կմ հեռահարութեան եւ 5Վ55ՌՄ (5B55PM)՝ մինչեւ 90կմ հեռահարութեան: Այս վերջին հրթիռները կարող են արձակուել նաեւ Ս-300ՊՍ ՀՀՀերից: Վերջիններս ինքնագնաց արձակման կայանքներ են՝ տեղադրուած ՄԱԶ–543 (MA3-543) մեքենայի ամրաշրջանակի վրայ: Ժամանակի ընթացքում, սակայն, ՀՀի համար մեծ խնդիր էր դառնում այն հանգամանքը, որ սպառւում էր առկայ 5Վ55Կ, 5Վ55Ռ եւ 5Վ55ՌՄ հրթիռների պիտանելիութեան ժամկէտը, իսկ նոր հրթիռների ձեռքբերումը դժուարանում էր, քանի որ դրանց արտադրութիւնը 1990ականների վերջին արդէն դադարեցուել էր[20]:

2013 Մարտի 15ին ՌԴ կառավարութիւնը, նախագահ Վլատիմիր Փութինի յանձնարարականի հիման վրայ, կազմում է ՀՀ հետ ռազմարհեստագիտական համագործակցութեան մասին նոր պայմանագրի նախագիծ, որը ստորագրւում է 2013 Յունիսի 25ին՝ ՌԴ անվտանգութեան խորհրդի քարտուղար Նիքոլայ Պատրուշեւի գլխաւորած պատուիրակութեան Երեւան կատարած այցի շրջանակներում: Փաստաթղթի տակ իրենց ստորագրութիւնն են դնում ՀՀ պաշտպանութեան նախարար Օհանեանը եւ Ռազմարհեստագիտական համագործակցութեան դաշնային ծառայութեան տնօրէն Ալեքսանդր Ֆոմինը[21]:

Երկու տարի անց՝ 2015ին, ՀՀն ՌԴից ձեռք է բերում 8 հատ արդիականացուած Ս-125 Պեչորա-2Մ (С-125 Печора-2М) ՀՀՀեր (Ս-125 Նեւա համալիրների արտահանուող տարբերակը)՝ 60մլն տոլար արժողութեամբ[22]: 2010ականների կէսերին Ս-125 ՀՀՀերը մարտական հերթապահութիւն էին իրականացնում արդէն ՀՀ արեւելեան սահմաններում, ինչպէս նաեւ ԼՂՀ տարածքում:

2010ականների կէսերին հայկական ՀՈՒ ՀՕՊ զօրքերի կազմում ընդհանուր առմամբ կային 3 զօրաբաժին (36 արձակման կայանք) Ս-300ՊՏ, 2 զօրաբաժին (24 արձակման կայանք) Ս-300ՊՍ, 1 զօրաբաժին ՀՀՀ Ս-75 (6 արձակման կայանք), 5 զօրաբաժին Ս-125 (20 արձակման կայանք), 3 զօրաբաժին Կրուգ (27 արձակման կայանք), մին-

---

https://www.youtube.com/watch?v=xXbJBKJBpKs: 21.09.2011:

[20] Линник:

[21] Александров:

[22] *Структура закупок*, էջ 3:

չեւ 9 հատ Օսա-ԱԿ, 48 հատ Ստրելա-10 (Стрела-10), 30 հատ Ստրելա-1 (Стрела-1) ԶՀՀեր, 48 հատ Շիլկա զենիթային ինքնագնաց կայանք (ЗСУ-23-4 «Шилка»), մինչեւ 200 Ստրելա-2 (Стрела-2) եւ 90 Իգլա (Игла) դիւրակիր զենիթահրթիռային կայանքներ[23]:

Ժամանակի ընթացքում հայկական ՀՕՊ զօրքերը համալրուեցին նաեւ 5Ն84Ա Օբորոնա-14 (5Н84А «Оборона-14), 22Ժ6Մ (22Ж6М), 36Դ6, (36Д6) Նեբո-ՍՎ (Небо-СВ)», 557ՈՒ6 Պերիսկոպ-ՎՄ (57У6 «Перископ-ВМ) ռադիոտեղորոշիչ կայանքներով[24]:

Զուգահեռաբար աշխատանքներ տարուեցին ԼՂՀ ՊԲ ՀՕՊ զօրքերի համալրման եւ զարգացման ուղղութեամբ՝ հիմնականում ՀՀ տարածքում մարտական հերթապահութիւնից հանուած ԶՀՀերի հաշուին: 2002 Օգոստոսի 1ին ԼՂՀ ՊԲ զենիթահրթիռահրետանային գնդի ուժերի եւ միջոցների հիմքի վրայ կազմաւորուեց զենիթահրթիռային ջոկատը (հրամանատար գնդապետ Սամուէլ Մանուկեան) եւ առանձին ռադիոարհեստագիտական գումարտակը (հրամանատար փոխգնդապետ Արթուր Հայրապետեան)[25]:

Պատերազմական եւ խաղաղ ժամանակաշրջանում ցուցաբերած մեծակշիռ աւանդի համար ԼՂՀ նախագահի 2007 Յունուարի 26ի հրամանագրով զենիթահրթիռային ջոկատը պարգեւատրուեց «Մարտական խաչ» 2րդ աստիճանի շքանշանով[26]:

Սկզբնապէս մայրաքաղաք Ստեփանակերտի եւ օդակայանի շուրջ տեղակայուեցին Ս-125Մ1, Կրուգ-Մ1, 2Կ12 Կուբ (2К12 Куб), իսկ աւելի ուշ՝ Ս-300ՊՍ ԶՀՀերի դիրքեր: 2010ականների կէսերի դրութեամբ ԼՂՀ ՊԲ ՀՕՊ զօրքերն իրենց կազմում ունէին 1 զօրաբաժին Ս-300ՊՍ, 1 զօրաբաժին Ս-125, 1 զօրաբաժին Կուբ, 5-6 մարտկոց (15–18 արձակման կայանք) Կրուգ, միքանի հատ Օսա-ԱԿ եւ Ստրելա-10 ԶՀՀեր, ինչպէս նաեւ Շիլկա ԶԻԿեր[27]: Ժամանակի ընթացքում, սակայն Կրուգ-Մ1 եւ Կուբ ԶՀՀերը դարձան անաշխատունակ՝ դրանց հնամաշութեան եւ դրանց հրթիռների

---

[23] Храмчихин:

[24] Линник:

[25] Սենոր Հասրաթեան, *Պաշտպանութեան բանակի զօրատեսակները, ծառայութիւնները եւ առանձին ստորաբաժանումները ղարաբաղեան պատերազմի գլխաւոր ռազմագործողութիւններում*, «Դիզակ պլիւս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 131:

[26] Նոյն:

[27] Храмчихин:

պիտանելիութեան ժամկէտի աւարտով: Մասնաւորապէս Կուբ ԶՀՀերի արտադրութիւնը դադարեցուել էր դեռեւս 1983ին[28]:

ԼՂՀ օդային սահմանների վերահսկողութիւնն իրականացնում էին Պ-18, Պ-19 եւ 36Դ6 ռադիոտեղորոշիչ կայանքները[29]:

Դեռեւս արցախեան առաջին պատերազմի պայմաններում ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում կազմաւորուած ՀՕՊ զօրքերը աստիճանաբար համարկուեցին միմեանց եւ արդիւնքում ստեղծուեց երկու հանրապետութիւնների օդային սահմանները պաշտպանող միասնական ՀՕՊ համակարգ: Արդէն 2010ականների կէսերին ՀՀ եւ Լեռնային Ղարաբաղի ՀՕՊը միացեալ աստիճանաշարային համակարգ էր, որը ներառում էր մեծ հեռահարութեան (Ս-300ՊՏ, Ս-300ՊՄ), միջին հեռահարութեան (Ս-125, Ս-75, Կրուգ, Կուբ), փոքր հեռահարութեան (Օսա-ԱԿ, ԶՍՈՒ-23-4 Շիլկա, Ստրելա-10) ԶՀՀեր, Զենիթա-հրետանային կայանքներ (Ս-60 (Ս-60) եւ ԴԶԶՀեր (Ստրելա-2, Իգլա, Իգլա-Ս, (Игла-С))[30]:

Ժամանակը ցոյց տուեց, սակայն, որ ԱՊՀ միաւորուած ՀՕՊ համակարգը քաղաքական մի շարք հանգամանքների պատճառով, արդիւնաւէտ չէր: Արդիւնքում 2000ականների կէսերին ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարութիւնը նախաձեռնեց մէկ այլ, այս անգամ ՀԱՊԿ միաւորուած ՀՕՊ համակարգի ստեղծումը աշխարհագրական երեք առանձին տարածաշրջաններում՝ Արեւելեան Եւրոպայում, Միջին Ասիայում եւ Հարաւային Կովկասում: Սրա շրջանակում 2015 Դեկտեմբերի 23ին ՀՀ պաշտպանութեան նախարար Օհանեանն ու ՌԴ պաշտպանութեան նախարար Սերգէյ Շոյգուն Մոսկուայում ստորագրեցին «ՀՀ եւ ՌԴ միջեւ հաւաքական անվտանգութեան կովկասեան տարածաշրջանում հակօդային պաշտպանութեան միաւորուած տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը[31], որը ՀՀ ազգային ժողովը վաւերացրեց 2016 Յունիսի 30ին[32]: Համաձայնագիրը հնարաւորութիւն ընձեռեց ՀՀին՝ ՌԴից ձեռք բերելու ՀՕՊ նոր սպառազինութիւն եւ մեքենասարք: Մասնաւորապէս,

---

[28] Линник:

[29] Նոյն:

[30] Сергей Минасян, *Сдерживание в карабахском конфликте* (Զսպումը Ղարաբաղեան հակամարտութիւնում), Կովկաս ինստիտուտ, Երեւան, 2016, էջ 124:

[31] Համաձայնագրի բնագիրը՝ «Հայաստանի իրաւական տեղեկատուական համակարգ» կայքէջում (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115473):

[32] Տե՛ս ՀՀ ԱԺ պաշտօնական կայքէջը՝ http://parliament.am/register.php?AgendaID=420&day=30&month=06&year=2016&lang=#30.06.2016:

2016ին ՀՀն ՌԴից ստացաւ 1 կամ 2 զօրաբաժին Բուկ-Մ1-2 (Бук-М1-2) ԶՀՀեր[33]: Այս համալիրները առաջին անգամ հանրութեանը ներկայացուեցին ՀՀ անկախութեան 25ամեակի առթիւ 2016 Սեպտեմբերի 21ին Երեւանի Հանրապետութեան հրապարակում կայացած զօրահանդէսի ժամանակ[34]:

ՀՕՊ սպառազինութեան եւ մեքենասարքի ձեռքբերմանը զուգահեռ, ՀՀում աշխատանքներ տարուեցին նաեւ եղած մեքենասարքի արդիականացման ուղղութեամբ: ՀՀի ռազմարդիւնաբերական համալիրի (ՌԱՀ) ձեռնարկութիւնների կողմից իրականացուեցին խորհրդային արտադրութեան ԶՀՀերի եւ ռադիոտեղորոշիչ կայանքների ամբողջական կամ մասնակի վերազինում[35], ինչպէս նաեւ մեքենասարքի որոշ նմուշների տեղական մշակումներ եւ արտադրութիւն: Մասնաւորապէս 2002-4՝ ՌԱՀի կազմում գործող «Պատնէշ» (գտնւում է Հրազդան քաղաքում եւ մինչեւ 2001 անուանւում էր «Հրազդանմեքենայ») ձեռնարկութիւնում վերանորոգուեցին Պ-14, Պ-18, 19Ժ6, 5Ն84Ա, 1Լ22 ռադիոտեղորոշիչ կայաններ, ԶՍՈՒ-23-4 Շիլկա ԶԻԿեր, իսկ 2012ին ձեռնարկութիւնում սկսուեցին Ս-300 ԶՀՀերի արդիականացման աշխատանքներ[36]: Յատկանշական է, որ «Պատնէշ» ձեռնարկութիւնը արտադրում է 1000 անունից աւելի մասնակտորներ[37]:

2010ից սկսած Օսա-Ակ եւ Ս-125 ԶՀՀերի մաշուած հեռուստաօպտիկական դիտոցի պաստառները փոխարինուեցին «Ժամիար» գիտաարտադրական ձեռնարկութեան (գտնւում է Աշտարակ քաղաքում) կողմից ստեղծուած ՏՕՎ-Մ հեռուստաօպտիկաէլեկտրոնային սարքերով[38]:

---

[33] В ожидании Бури, էջ 68:

[34] Զօրահանդէսի արխիւային տեսաժապաւէնը՝ https://www.youtube.com/watch?v=ouK-7yHluql: 21.09.2016:

[35] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Մ. Ռ. Իսախանեան, Ա. Կ. Միրզաբէկեան, Ա. Հ. Եսայեան, Բ. Վ. Ոսկանեան, «ՀՀ ՌԱՀի ներդրումը ՀՕՊի եւ ռազմական ալիացիայի զարգացման գործում», *Հայկական բանակ ռազմագիտական հանդէս*, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայեանի անուան ազգային ռազմավարական հետազօտութիւնների ինստիտուտ, 1-2:2013, էջ 60:

[36] ЗАО «Патнеш», Блог «ВПК Армении» («Պատնէշ» ՓԲԸ, Բլոգ «Հայաստանի ՌԱՀ») (https://vpk-armenii.livejournal.com/3507.html) 21.04.2013:

[37] Տե՛ս՝ «Պատնէշ» ՓԲԸ պաշտօնական կայքէջը՝ https://www.patnesh.info.am/wall/:

[38] ООО «НПП Жамар», Блог " ВПК Армении" («Ժամիար ԳԱԶ» ՍՊԸ, Բլոգ «Հայաստանի ՌԱՀ»)՝ (https://vpk-armenii.livejournal.com/50095.html) մատչում՝ 22.12.2014:

2015ին Չարենցաւանի հաստոցաշինական գործարանում (հիմն. 1947) կատարուեցին Ս-125 Պեչորա-2Մ ՀՀՀերի արձակման կայանների եւ դրանց ալեհաւաքային համալիրի արդիականացում եւ վերազինում[39]:

2010ականների առաջին կէսին Երեւանի կապի միջոցների գիտահետազօտական հիմնարկի (հիմն. 1978) կողմից մշակուեցին եւ ստեղծուեցին հայրենական արտադրութեան ՄՇՌ-200, ՄԵՍ-3 եւ ՄԵՍ-5 ռադիոտեղորոշիչ կայանները[40]: Յատկանշական մի փաստ եւս. Երեւանի կապի միջոցների գիտահետազօտական հիմնարկը, գործակցելով իրանական կողմի հետ, մշակել է նաեւ Najm-802 ռադիոտեղորոշիչ կայանը, որն առաջին անգամ ներկայացուեց 2011ի ամռանը Իրանում կայացած գիտական եւ պաշտպանական ցուցահանդէսի ժամանակ[41]:

Նոյն ժամանակահատուածում Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազօտական ինստիտուտի (հիմն. 1956) կողմից արդիականացուեցին խորհրդային արտադրութեան ռադիոէլեկտրոնային պայքարի Ռ-330 Մանդատ (Р-330 Мандат) համալիրները, որոնք ստացան «Մանուշակ» անուանումը[42]:

Հայկական ՌԱՀ զարգացման, այդ թւում հայկական ՋՈՒերում առկայ սպառազինութեան, ներառեալ ՀՕՊ միջոցների՝ ՌԱՀ ձեռնարկութիւններում իրականացուող արդիականացման գործընթացում, կարեւորագոյն քայլ էր «Ռազմարդիւնաբերական համալիրի մասին» օրէնքի ընդունումը:

---

39 Вклад ВПК Армении в развитие ПВО и военной авиации, Блог " ВПК Армении" (Հայաստանի ՌԱՀի աւանդը ՀՕՊ եւ ռազմօդուժի զարգացման գործում, Բլոգ «Հայաստանի ՌԱՀ»)՝ https://vpk-armenii.livejournal.com/71391.html , մատչում՝ 17.08.2015:

40 Ռադիոտեղորոշիչ կայանների մասին եւ դրանց լուսանկարները տե՛ս՝ Մ. Վ. Մարկոսեան, «ՀՕՊի զօրքերի տարաշարժունութեան մեծացման տեսանկիւնից արդիական ռադարների ստեղծման որոշ հարցեր», *Հայկական բանակ*, 1-2:2013, էջ 47-49:

41 Ռադիոտեղորոշիչ կայանի մասին եւ դրա լուսանկարը տե՛ս՝ Иранская РЛС Najm-802 с фазированной антенной решеткой разработана в Армении, Блог "БМПД" (Իրանական հատուածային ալեհաւաքային ճաղավանդակով ՆԱՋՄ-802 ՌՏԿն՝ մշակուած Հայաստանում, Բլոգ «ԲՄՊԴ»)՝ https://bmpd.livejournal.com/2923229.html , մատչում՝ 01.11.2017:

42 «Մանուշակ» ՌԷՊ համալիրի մասին եւ դրա լուսանկարները տե՛ս՝ "В Армении глубоко модернизирован комплекс радиоэлектронного подавления Р-330, Блог "ВПК Армении"" (Հայաստանում խորութեամբ արդիականացուել է ռադիոէլեկտրոնային պայքարի Ռ-330 համալիրը, Բլոգ «Հայաստանի ՌԱՀ»), https://vpk-armenii.livejournal.com/32435.html , մատչում՝ 25.04.2014:

Օրէնքը 2015 Մարտի 25ին ընդունուեց ՀՀ ազգային ժողովի կողմից, իսկ 2015 Ապրիլի 15ին՝ ստորագրուեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի կողմից[43]:

ՀՕՊ արհեստագիտական միջոցների համալրման եւ արդիականացման գործընթացին զուգահեռ լուծուեց նաեւ անձնակազմերի, մասնաւորապէս սպայական կազմի պատրաստման խնդիրը: 2005ին ՀՀ ՊՆ մարաջախտ Արմենակ Խամփերեանցի անուան Ռազմաւիւցիոն հիմնարկում ստեղծուեց ՀՕՊ ֆակուլտէտ՝ համազօրային, ռադիոարհեստագիտական եւ ՀՕՊ ամբիոններով: 2009ին ֆակուլտէտը տուեց իր առաջին շրջանաւարտները[44]:

Վերը նշուած փուլում հայկական ՀՕՊ զօրքերի ստեղծման եւ կայացման գործում մեծ էր յատկապէս զօրավար-հազարապետեր Ալիկ Սարգսեանի, Արարատ Համբարեանի, գնդապետեր Սերգէյ Գուրոկեանի եւ Նիկոլայ Բաբայեանի աւանդը[45]:

Միաժամանակ անցկացուեցին ՀՕՊ զօրքերի մասնակցութեամբ խոշոր զօրավարժութիւններ, գործնական պարապմունքներ, այդ թւում մարտական մեքենաներից կատարուող հրթիռների ստուգողական-փորձնական արձակումներ: 1998ին ՀՀ պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը եւ ՀՕՊ վարչութեան պետ զօրավար-հազարապետ Համբարեանը[46] որպէս դիտորդ պետութեան ներկայացուցիչներ առաջին անգամ ներկայ են գտնւում ՌԴ ՌՕՈՒի Աշուլուկ զօրավարժարանում (Աստրախանի մարզ) ՌԴի, Պելառուսի եւ Ղազախստանի ՀՕՊ զօրքերի ներգրաւմամբ անցկացուող ԱՊՀ ՀՕՊ զօրքերի զօրավարժութեանը: Արդէն յաջորդ տարուանից հայկական ՀՕՊ զօրքերը նոյնպէս սկսում են մաս-

---

[43] Օրէնքը տե՛ս՝ «Հայաստանի իրաւական տեղեկատուական համակարգ» կայքէջում (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97154):

[44] Տիգրան Դեւրիկեան, *Երկնքի պահապաններն ու փիրակալները*, ՀՀ պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան վարչութիւն, Երեւան, 2008, էջ 31:

[45] Օհանեան, էջ 202:

[46] Արարատ Համբարեանը Խորհրդային բանակի պահակազօրի զօրավար-գնդապետ Խաչատուր Համբարեանի որդին է: Տարբեր պաշտօններ է վարել խորհրդային ՋՈՒ ՀՕՊ զօրքերում, 1996ին աւարտել է ՌԴ ՋՈՒ գլխաւոր սպայակոյտի օգնական դպրոցը եւ պաշտպանելով թեկնածուական՝ նշանակուել է ՌԴ զրահատանկային զօրքերի ակադեմիայի ՀՕՊ ամբիոնի պետ, որտեղից էլ 1998ին վերադարձել է ՀՀ եւ ծառայութեան անցել ՀՀ ՋՈՒերում: Նոյն տարում ստանձնել է ՀՀ ՋՈՒ ՀՕՊ վարչութեան պետի պաշտօնը՝ փոխարինելով զօրավար-հազարապետ Ալիկ Սարգսեանին (Դեւրիկեան, էջ 31):

նակցել այդ զօրավարժութիւններին: Այդ մասին Համբարեանը 2008ին պատմում էր. «*99ին առաջին անգամ Ս-125 կայանքներով գնացինք, 2000ին՝ Ս-75ից ու Ս-125ից կազմուած ՀՕՊ թէեւ փոքր, բայց՝ խմբաւորումով: 2001ից որոշուեց այս զօրավարժութիւնները երկու տարին մէկ անցկացնել, ու 2003ին գնացինք արդէն Ս-125ով ու Օսա-ԱԿ մարտական մեքենաներով: 2009ին կը մասնակցենք Ս-300 կայանքով, որով կրակեցինք 2005ին*»[47]:

ՀՕՊ զօրքերի զօրավարժութիւնների անցկացման համար պայմաններ ստեղծուեցին նաեւ ՀՀում: Մասնաւորապէս Մարշալ Յովհաննէս Բաղրամեանի անուան զօրավարժարանում[48] ստեղծուեց ՀՕՊ կրակային բաժինը՝ նախատեսուած Ս-60 զենիթահրետանային կայանքներից, ինչպէս նաեւ փոքր հեռահարութեան Ստրելա-10 եւ Օսա-ԱԿ զենիթահրթիռային կայանքներից կրակ վարելու համար[49]:

2014 Նոյեմբերի 6ին ՀՀ եւ ԼՂՀ տարածքում միաժամանակ մեկնարկում են «Միասնութիւն-2014» գործարկում-մարտավարական լայնածաւալ զօրավարժութիւնները, որոնց ներգրաււում են ՀՀ ԶՈՒ եւ ԼՂՀ ՊԲ բանակի 450 ՀՕՊ միջոցներ: Դա 1991ից յետոյ անցկացուած ամենախոշոր զօրավարժութիւնն էր[50]: Այդ զօրավարժութեան շրջանակում Նոյեմբերի 13ին անցկացուեցին կրակային մարտավարական զօրավարժութիւններ Օսա-ԱԿ մարտական մեքենաներից[51]:

Այստեղ կը ցանկանայինք մէկ կարեւոր հանգամանք շեշտադրել: Ինչպէս տեսանք ՀՕՊ զօրքերի ստեղծման եւ զարգացման ողջ ընթացքում

---

[47] Դեւրիկեան, էջ 31:

[48] Մարշալ Յովհաննէս Բաղրամեանի անուան զօրավարժարանը, որը գտնւում է Արմաւիրի եւ Արագածոտնի մարզերի սահմաններում, զբաղեցնում է աւելի քան 13 հազար հեկտար տարածք (Արսէն Աղեկեան, «Բաղրամեան զօրավարժարանը՝ ՀՀ ԶՈՒ փորձաքար», *Հայ զինուոր*, 23(1092):2015, http://www.hayzinvor.am/32423.html:

[49] Դեւրիկեան, էջ 31:

[50] Леонид Нерсисян, “Беспрецедентные военные учения в Армении” (Լէոնիտ Ներսիսեան, Աննախադէպ զօրավարժութիւններ Հայաստանում), Федеральное информационное агентство «Regnum» («Ռեգնում» դաշնային տեղեկատուական գործակալութիւն), https://regnum.ru/news/polit/1864691.html , մատչում՝ 11.11.2014:

[51] Օսա-ԱԿ մարտական մեքենաներից հրթիռների արձակման լուսանկարները տե՛ս՝ «Միասնութիւն 2014» զօրավարժութեան ժամանակ ՀՕՊ զօրաբաժինը խոցել է բոլոր թիրախները», «Արմէնպրէս» լրատուական գործակալութիւն, https://armenpress.am/arm/news/783810, մատչում՝ 3.11.2014:

ՀՀն գործակցում էր բացառապէս մէկ պետութեան՝ ՌԴի հետ եւ հետեւաբար հայկական ՀՕՊ զօրքերը բացառապէս ձեռք էին բերում խորհրդային/ռուսական սպառազինութիւն եւ մեքենասարք: Համեմատութեան համար նշենք, որ այսրկովկասեան միւս երկու պետութիւնները՝ Վրաստանը եւ, յատկապէս, Ադրբեջանը այս հարցում այլ ճանապարհով գնացին՝ միաժամանակ ձեռք բերելով նաեւ արեւմտեան արտադրութեան նորագոյն սպառազինութիւն եւ մեքենասարք: Մասնաւորապէս Վրաստանը մինչեւ 2008ի ռուս-վրացական պատերազմը (Օգոստոս 5-12) բացի վերոնշեալ խորհրդային նոյնատիպ ՀՕՊ համակարգերից, Իսրայէլից ձեռք էր բերել փոքր հեռահարութեան մէկ մարտկոց (4 մարտական մեքենայ)՝ Spyder-SR/Short Range ԶՀՀեր, ինչպէս նաեւ թուրքական ռազմարդիւնաբերական յայտնի Aselsan ընկերութեան կողմից արտադրուած ՀՕՊ զօրքերի մեքենացուած կառավարման Skywatcher համակարգ[52]:

Ադրբեջանը 2017-18ին Իսրայէլից գնեց մեծ հեռահարութեան (մինչեւ 90կմ) Barak-8, (ցամաքային բազաւորման քարշակուող տարբերակը) ԶՀՀեր (1,1մլրդ տոլար արժողութեամբ), 2016-17՝ մինչեւ 500կմ հեռաւորութեան վրայ թիրախներ յայտնաբերող 2 հատ EL/M-2080 Green Pine ռադիոտեղորոշիչ կայաններ (500մլն տոլար արժողութեամբ)[53]: Նոյն ժամանակ Ադրբեջանը Իսրայէլից ձեռք բերեց նաեւ ELM-2288 AD-STAR եւ ELM-2106NG շարժական ռադիոտեղորոշիչ կայաններ[54], իսկ Սպանիայից գնեց Lanza MMR եւ Lanza LTR-25 ռադիոտեղորոշիչ կայաններ[55]: Որոշ տեղեկութիւններով Ադրբեջանի հարաւում՝ Իրանի իսլամական հանրապետութեան հետ սահմանին դեռեւս 2008ին տեղակայուել են ամերիկեան ար-

---

[52] М. С. Барабанов, А. В. Лавров, В. А. Целуйко, *Танки августа. сборник статей* (Օգոստոսի տանկերը, յօդուածների ժողովածու), Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2009, էջ 24, 33:

[53] *Основные поставщики вооружений Азербайджану в 2013-2020 гг.* (Ադրբեջանին սպառազինութեան հիմնական մատակարարները 2013-20), Аналитическиая записка (վերլուծական տեղեկագիր), «ЦАМТО», Զէնքի միջազգային առեւտրի վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2022, էջ 2, https://armstrade.org/files/analytics/602.pdf :

[54] Сергей Линник, “Современное состояние системы ПВО Азербайджана” (Ադրբեջանի ՀՕՊ համակարգի ներկայ վիճակը), https://topwar.ru/137819-sovremennoe-sostoyanie-sistemy-pvo-azerbaydzhana.html , մատչում՝ 17.03.2018:

[55] Ռազմինֆո, «Ադրբեջանը գնել է սպանական Lanza ռադարներ», https://razm.info/135535 , մատչում՝ 20.05.2019 :

տադրութեան ARSR-4 ռադիոտեղորոշիչ կայաններ, որոնք թիրախներ յայտնաբերում են մինչեւ 450կմ հեռաւորութեան վրայ[56]:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌՕՈՒԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ ՕԴԱՅԻՆ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՕՊ ՁՕՐՔԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԷՄ

2000ականների սկզբներից Ադրբեջանն, աստիճանաբար աւելացրեց սպառազինութեան - այդ թւում օդային միջոցների - գնման ծաւալները: Մասնաւորապէս 2002ին Վրաստանը Ադրբեջանին մատակարարեց 6 հատ Су-25Т «Грач», իսկ 2005ին՝ 7 հատ Су-25/УБ «Грач» գրոհիչ ինքնաթիռներ: 2010-14՝ Վրաստանը Ադրբեջանի հետ իրականացնում է 15 հատ ՍՈՒ-25 «Գրաչ» գրոհիչների արտօնագրուած արտադրութիւն[57]: 2009-12՝ Ադրբեջանը գնեց եւս 7 հատ ՍՈՒ-25 «Գրաչ» գրոհիչ ինքնաթիռներ Պելառուսից[58]:

Ադրբեջանի ՌՕՈՒՆ լուրջ խնդիր ունէր յատկապէս կործանիչների առումով, քանի որ դեռեւս Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ Ադրբեջանին անցած միքանի МиГ-21СМ եւ МиГ-21Бис կործանիչները եւ մօտ 40 հատ МиГ-25ПД կործանիչ-կալանիչները այլեւս պիտանի չէին շահագործման համար[59]: Այս բացը լրացնելու համար 2006-7ին Ադրբեջանը Ուկրայնայից ձեռք բերեց 14 հատ Միգ-29, իսկ 2009-11՝ МиГ-29УБ կործանիչներ[60]: ՄիԳ-29 կործանիչները Ադրբեջան ուղարկուելուց առաջ արդիականացուեցին Լվովի պետական օդանաւային վերանորոգման գործարանում[61]:

2006ին Ադրբեջանը Ուկրայնայից ձեռք բերեց նաեւ 12 հատ L-39 «Альбатрос» ուսումնամարտական ինքնաթիռներ[62]: Ադրբեջանը մեծածաւալ գնումներ էր իրականացնում համալրելու համար իր ուղղաթիռների պարկը: Մասնաւորապէս 2009-10՝ Ուկրայնայից գնեց 12 հատ Ми-24 հարուածային ուղղաթիռներ, որոնք 2010-12՝ Հարաւ-ափրիկեան հանրապետութեան հետ համատեղ իրականացուած ծրագրի շրջանակում արդիականացւում են եւ հասցւում Ми-24G Super Hind Mk.IV մակարդակի՝ ուժեղացնելով դրանք ուկրայնական արտադրութեան Բարյէր-Վ հակատան-

---

[56] Линник, “Современное состояние системы ПВО Азербайджана”:
[57] *Основные поставщики*, էջ 8-9:
[58] Նոյն, էջ 4:
[59] Линник, “Современное состояние системы ПВО Азербайджана”:
[60] *Основные поставщики*, էջ 8:
[61] Линник, “Современное состояние системы ПВО Азербайджана”:
[62] *Основные поставщики*, էջ 8:

կային հրթռային համալիրներով[63]: 2011-13՝ Ադրբեջանը ՌԴից գնեց նաեւ 24 հատ Մի-35Մ հարուածային ուղղաթիռներ, իսկ 2009-15՝ 66 հատ Մի-17Բ-1 ռազմափոխադրային ուղղաթիռներ[64]: Վերջիններս ուժեղացուում են 2014ին Իսրայէլից գնուած LAHAT հակատանկային կառավարուող հրթիռներով[65], ինչի արդիւնքում Մի-17Վ-1 ուղղաթիռները փաստացի վերածւում են հարուածային ուղղաթիռների: Յատկանշական է, որ 1990 Նոյեմբերի 19ին ստորագրուած «Եւրոպայում սովորական զինուած ուժերի մասին» պայմանագրի համաձայն, որին միացել էին ԱՊՀ պետութիւնները՝ 1992 Մայիսի 15ին Թաշքենդում ստորագրուած «Սովորական սպառազինութեան եւ մեքենասարքի առաւելագոյն քանակի մասին» արձանագրութեամբ[66], Ադրբեջանն իրաւունք ունէր ունենալ ոչ աւել քան 50 հարուածային ուղղաթիռ: Սակայն փաստացի ստացուեց, որ Ադրբեջանի ՌՕՈՒի կազմում հարուածային ուղղաթիռների թիւն աւելին էր:

2015ի դրութեամբ Քիւրդամիրի օդախարիսխում տեղակայուած էին ադրբեջանական ՌՕՈՒի 14 հատ Լ-39 ուսումնամարտական ինքնաթիռներ, 30 հատ Սու-25 եւ Սու-25 ՈՒԲ գրոհիչ ինքնաթիռներ, 2 հատ Սу-24 ռմբակոծիչներ, 5 հատ Սу-17 եւ 4 հատ ՄիԳ-21 կործանիչներ: Սու-24 ռմբակոծիչները, Սու-17 ու ՄիԳ-21 կործանիչները, սակայն, իրենց մարտունակութիւնն արդէն կորցրել էին եւ դուրս էին հանուել օգտագործումից: Ինչ վերաբերում է ուղղաթիռներին, ապա դրանց մեծ մասը տեղակայուած էր Պաքուից արեւելք ընկած Կալա օդախարիսխում՝ մօտ 40 հատ Մի-24 ու Մի-35 եւ մօտ 40 հատ Մի-8 ու Մի-17: Ուղղաթիռների մի մասն էլ տեղակայուած էր Նախիջեւանի օդակայանում[67]:

Մարտական ինքնաթիռներից եւ ուղղաթիռներից բացի, 2010ականների սկզբից, նախ Իսրայէլից, ապա նաեւ Թուրքիայից սկսեց գնել նաեւ հետախուզական եւ հարուածային, այդ թւում մահապարտ, անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ): Մասնաւորապէս 2010ին Ադրբեջանը գնեց իսրայէլական

---

[63] Նոյն:

[64] *Россия на рынке вооружений Азербайджана в 2013 - 2020 гг., Аналитическиая записка* (Ռուսաստանը Ադրբեջանի սպառազինութեան շուկայում, 2013-20ին. վերլուծական տեղեկագիր), «ЦАМТО», Զէնքի միջազգային առեւտրի վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2022, էջ 7-8, https://armstrade.org/files/analytics/449.pdf:

[65] “Основные поставщики”, էջ 2:

[66] Արձանագրութիւնը տե՛ս՝ Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 326, ց. 9, գ. 114, թ. 1-11:

[67] *В ожидании Бури*, էջ 21-22:

արտադրութեան 16 հատ Aerostar ԱԹՍեր, իսկ 2011-12՝ իր տարածքում իրականացրեց դրանց լիզենզաւորուած արտադրութիւնը՝ թուով 30 հատ: Բացի այդ 2009ին Իսրայէլից գնուեցին 2 հատ Hermes-450, 2016՝ 2 հատ Hermes-900, 2010-12՝ 46 հատ Orbiter-2M, 2015ին՝ առնուազն 3 հատ Thunder-B ԱԹՍեր[68]: Ադրբեջանը Իսրայէլից ձեռք բերեց նաեւ անյայտ քանակի հետախուզական Hermes-200 եւ մեծաքանակ IAI Harop մահապարտ ԱԹՍեր:

2010ականների կէսերին Ադրբեջանը պայմանագիր կնքեց նաեւ թուրքական արտադրութեան հետախուզական Turna ԱԹՍերի ձեռքբերման վերաբերեալ, իսկ ադրբեջանական ԶՈՒերի սպաները Թուրքիայում սկսեցին մասնագիտական պատրաստութիւն անցնել՝ Turna ԱԹՍերը ղեկավարելու նպատակով[69]:

Մեծաթիւ ԱԹՍերի ձեռքբերմանն զուգահեռ Ադրբեջանի ԶՈՒերը սկսեցին դրանք կիրառել առաջնագծում: Մասնաւորապէս, 2011ի Սեպտեմբերի 12ին՝ ժամը 07:00ի սահմաններում, Արցախի ՀՕՊ եւ ՌԷՊ ստորաբաժանումների գործողութիւնների արդիւնքում Մարտունու շրջանի Վազաշէն գիւղի օդային տարածքում խոցուեց ադրբեջանական զինուժի ԱԹՍ, որը, հայկական կողմի գնահատմամբ կամ Hermes 450 էր, կամ էլ Hermes 180[70]:

ՔԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

2016 Ապրիլի 2ին, լուսադէմին, սկսուեց Ադրբեջանի ԶՈՒերի լայնածաւալ յարձակումը ԼՂՀ շփման գծի տարբեր ուղղութիւններով՝ սկիզբ դնելով 1994ի մայիսեան զինադադարից յետոյ ամենամեծ ռազմական գործողութիւններին հակամարտութեան գօտում: Յատկանշական է, որ այդ յարձակման ժամանակ, որը տեւեց 4 օր (մինչեւ Ապրիլի 5ը) ադրբեջանական ՌՕՈՒն չկիրառեց մարտական ինքնաթիռներ, այլ կիրառեց փոքրաթիւ մարտական ուղղաթիռներ եւ մեծ թուով ԱԹՍեր: Մասնաւորապէս ադրբեջանական ԶՈՒերը կիրառեցին միքանի տասնեակ հարուածային–մահապարտ ԱԹՍեր, այդ թւում նման ԱԹՍով հարուած հասցուեց պաշտպա-

---

[68] "Основные поставщики", էջ 2:

[69] Լեւոն Յովսէփեան, Արծրուն Յովհաննիսեան, Սերգէյ Մինասեան, *Տարածաշրջանի ռազմական տեղեկագիր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2016, էջ 133:

[70] Չի բացառւում, որ Իրանում խոցուած իսրայէլական ԱԹՍն Ադրբեջանից արձակուած լինէր (The Aviationist, «Ռազմինֆո», (https://razm.info/52195) մատչում՝ 27.08.2014):

նութեան բանակի 5րդ ՊՇի սպայակոյտին[71]: Ադրբեջանական ԶՈՒերը օգտագործեցին նաեւ իսրայէլական արտադրութեան Skystar-180 տիպի հետախուզական օդապարիկ: Վերջինս կարող է աշխատել մինչեւ 300մ բարձրութեան վրայ[72]:

Ապրիլի 2ի լուսաբացին ժամը 07.01ին Հիւսիսային՝ Գիւլիստանի ուղղութեամբ խոցուեց Մի-24 հարուածային ուղղաթիռը[73]: Վերջինս խոցուեց ԼՂՀ ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումներից մէկի կողմից՝ Իգլա ԴԶԶով:

Ապրիլի 2ին ժամը 12.21ին հարաւային ուղղութեամբ խոցուեց Մի-24G հարուածային ուղղաթիռը[74], սակայն ոչ ՀՕՊ ստորաբաժանումների կողմից: Ուղղաթիռը փորձել էր գրոհել պաշտպանութեան բանակի դիրքերը, սակայն ոչնչացուել՝ ՐՊԳ-7 հակատանկային նռնականետից:

Ապրիլի 2-5 ժամանակահատուածում Ադրբեջանի ընդհանուր կորուստները կազմեցին 2 Մի-24 հարուածային ուղղաթիռ, 14 հարուածային եւ հետախուզական ԱԹՍեր, այդ թւում IAI Harop, Thunder B, Orbiter[75]: Եւս 6 ԱԹՍեր՝ ԼՂՀ ՊԲ ՀՕՊ ստորաբաժանումների կողմից Ապրիլի 5-30ը[76]:

Հակառակորդի ԱԹՍերի մեծ մասը խոցուեց հայկական ՌԱՀ ձեռնարկութիւններում արդիականացուած ՕՍԱ–ԱԿ եւ Շիլկաների միջոցով: Նաեւ օգտագործուեցին հայկական արտադրութեան Շղարշ, Ամպրոպ եւ Մանուշակ (սա ճնշում էր հակառակորդի ռադիոկապը) ՌԷՊ միջոցներ[77]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, 1994 մայիսեան զինադադարից յետոյ շարունակուեց հայկական ՀՕՊ զօրքերի զարգացումը, սպառազինութեան ու մեքենասարքի յետագայ համալրման ու արդիականացման գործընթացը: ՀՀ ՌԱՀ ձեռնարկութիւնների կողմից իրականացուեցին խորհրդային արտադրութեան ՀՕՊ ԶՀՀերի եւ ռադիոտեղորոշիչ կայանքների ամբողջական կամ մաս-

---

[71] Արծրուն Յովհաննիսեան, *Ռազմարուեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարներ*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 156, Երեւան, 2017, էջ 456:

[72] Սենոր Հասրաթեան, *Ապրիլեան քառօրեայ առճակատում (Արցախ, 02 - 05. 04. 2016 թ.)*, «Տիգրան Մեծ» հրատ. Երեւան, 2017, էջ 10:

[73] Նոյն, էջ 20 – 21:

[74] Նոյն, էջ 29:

[75] Նոյն, 146:

[76] Նոյն, էջ 146:

[77] В ожидании Бури, էջ 77:

նակի վերազինում, ինչպէս նաեւ մեքենասարքի որոշ նմուշների տեղական մշակումներ եւ արտադրութիւն:

Դեռեւս արցախեան առաջին պատերազմի ժամանակ ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում կազմաւորուած ՀՕՊ զօրքերը աստիճանաբար, համարկուեցին միմեանց եւ արդիւնքում ստեղծուեց երկու հանրապետութիւնների օդային սահմանները պաշտպանող միացեալ աստիճանակարգուած ՀՕՊ համակարգ:

Յաջողութեամբ լուծուեց նաեւ ՀՀում գործող բարձրագոյն ուսումնական հաստատութիւնում ՀՕՊ զօրքերի համար համապատասխան սպայական նոր անձնակազմեր պատրաստելու խնդիրը:

Հայկական ՀՕՊ զօրքերը աշխուժ մասնակցութիւն ունեցան 2016ի ապրիլեան ռազմական գործողութիւններին: Հայկական ՀՕՊ զօրքերը իրենց գերազանց դրսեւորեցին՝ յաջողութեամբ խոցելով հակառակորդի օդային յարձակման միջոցները, դրանով իսկ նուազեցնելով հայկական կողմի կորուստները:

Միաժամանակ ադրբեջանական կողմը 2016 ապրիլեան ռազմական գործողութիւններում մեծ փորձ կուտակեց՝ առաջին անգամ միաժամանակ կիրառելով մեծ թուով հարուածային-մահապարտ ԱԹՍեր: Սա նախապատրաստութիւն էր 2020ի արցախեան 44օրեայ պատերազմին, որտեղ Ադրբեջանը կիրառեց միքանի հազար օդային յարձակման ու խոցման միջոցներ, այդ թւում հարուածային-մահապարտ ԱԹՍեր ու տարբեր տեսակի գերճշգրիտ հրթիռներ:

Իր հերթին հայկական կողմը թէեւ որոշ, սակայն ինչպէս ժամանակը ցոյց տուեց ոչ-բաւարար չափով հետեւութիւններ արեց տեղի ունեցածից: Մասնաւորապես, չնայած այն փաստին, որ 2016 ապրիլեան ռազմագործողութիւններից յետոյ, մինչեւ 2020ի 44-օրեայ պատերազմն ընկած ժամանակահատուածում հայկական ՀՕՊ զօրքերը համալրուեցին խորհրդային/ռուսական արտադրութեան նոր ԶՀՀերով եւ ՌԷՊ միջոցներով, սակայն դրանց քանակը եւ որակը բաւարար չեղան կանխելու համար 2020ի աղէտը:

THE DEVELOPMENT OF THE ARMENIAN AIR DEFENCE FORCES BETWEEN THE MAY 1994 ARMISTICE AND THE MILITARY ACTIONS OF APRIL 2016 (PART 2)

(Summary)

HAYK NAZARYAN
nazaryan_h90.90@mail.ru

The paper highlights the upgrading and development of the air defense systems of the Republics of Armenia and Artsakh after the May 1994 armistice with Azerbaijan.

This upgrading took place within the context of Russian-Armenian air defense agreements, which enabled the modernization of the Armenian air defense systems and forces to a certain extent. In 1995 Armenia joined the Joint CIS Air Defense System. That same year the Russian 102 military base, equipped with an air defense regiment, was established in the territory of the Republic of Armenia. Furthermore, in 2016 an Armenian and Russian joint air defense system was formed in the territory of the Republic of Armenia.

The paper compares the upgrading and development of the air defense forces of neighboring Azerbaijan and Georgia with those of Armenia. It details how Azerbaijan modernized its air defense system and notes that Azerbaijan diversified its air defense forces through purchasing up-to-date hardware from countries like Ukraine, Belorussia, Georgia and Israel. The paper argues that these acts violated the arms limitations agreements of the Caucasus.

The paper partly examines the 2016 four-day war that broke out between Armenia and Artsak on the one hand and Azerbaijan on the other and argues that both sides learned hard lessons from it. Nonetheless, it seems that Azerbaijan drew more strategic lessons from the outcome and made excellent use of its failures, unlike Armenia.